ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

Ն 788-Ա

24 դեկտեմբերի 2025 թ.

ՄԵԼՍԻԴԱ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածների, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Մելսիդա Սիմոնյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մեծ Մասրիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մելսիդա Սիմոնյանին տրամադրել 2026 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մի մասը՝ 2026 թվականի հունվարի 5-ից 2026 թվականի հունվարի 19-ը ներառյալ (10 աշխատանքային օր):

2. Մելսիդա Սիմոնյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մեծ Մասրիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վարդենիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բժիշկ-թերապևտ Քրիստինե Մելքոնյանին (առանց տնօրենի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ):

24.12.2025

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ք.Գավառ